Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ «Երևանի Դավիթ Սարապյանի անվան հ. 100 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Հայոց լեզու և գրականություն» (14 դասաժամ), «Հայոց եկեղեցու պատմություն» (11 դասաժամ), «Դասվար» (11 դասաժամ) «Ֆիզկուլտուրա» (8 դասաժամ), «Մաթեմատիկա» (10 դասաժամ), «Հասարակագիտություն» (4 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է / Ձև 1/
2. Փաստաթուղթ /դիպլոմ/՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն /Ձև 4/

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները / դրանց առկայության դեպքում/
6. Մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույք:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ 30.08.2023. մինչև՝ 12.09.2023թ.-ը, ամեն օր՝ ժամը 10:00-15:00-ն ,բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա 15.09.2023թ-ին, ժամը 13^{00}-ին Երևանի Դավիթ Սարապյանի անվան հ.100 հիմնական դպրոցում, հասցեն Մարգարյան 9:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 34-28-00 հեռախոսահամարով: